ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԴԻԱՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ

ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԸ 1990-2010-ԱԿԱՆ ԹԹ. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ. 01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն. գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսությանթեմանհաստատվել է Երևանի պետականհամալսարանում:

Գիտականղեկավար՝ **Քալանթարյան Ժենյա Անդրանիկի**

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Ադալյան Նորայր Մարտիրոսի**
բանասիրական գիտությունների դոկտոր

Ավանեսյան Արմեն Ավանեսի
բանասիրական գիտությունների թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. դեկտեմբերի 20-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 25 Աբովյան 52^{ա}, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. նոյեմբերի 15-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ **ՄԱԿԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՐՇԱՎԻՐԻ**
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է ժամանակակից հայ գրականության մեջ իր որոշակի դրսևորումն ունեցող հետմոդեռնիզմի (պոստմոդեռնիզմի) առկայությանը, նրա օրինաչափությունների

բացահայտմանը և քննադատության արձագանքներին: Հետազոտությունը կատարվել է լայնածավալ գրական նյութի հիման վրա, ընդգրկվել են գրեթե քառորդ դարի հայ գրականության բոլոր սեռերն իրենց առավել ցայտուն ներկայացուցիչներով:

Պոստմոդեռնիզմն իր գրական, արվեստագիտական և ավելի լայն՝ քաղաքակրթական իմաստով տեսության մեջ դեռևս միասնական ու հստակ ընկալում չի ձևավորել, ուստի ատենախոսության մեջ անհրաժեշտաբար քննվել են տեսական տարաբնույթ ըմբռնումներ և արվել եզրակացություններ, որոնց լույսի տակ էլ քննվել են հայ գրականության մեջ ի հայտեկած առանձնահատկությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության **առարկան** 1990-2010-ական թվականների հնարավորի սահմաններում ընդգրկված հայ գրականությունն է՝ արձակը, դրամատուրգիան:

Ատենախոսության **նպատակն** է ուսումնասիրել և հանգամանալից քննարկումով ու համակարգված ներկայացնել 1990-2010-ական թվականների հայ գրականության մեջ պոստմոդեռնիզմի դրսևորման յուրահատկությունները՝ շեշտը դնելով դրա հետ կապված այնպիսի հարցադրումների վրա, որոնք մինչ օրս բավարար չափով ուսումնասիրված չեն:

Ելնելով թեմայի առանձնահատկություններից՝ շեշտադրվել են մի քանի հիմնական **խնդիրներ՝**

1. Ներկայացնել պոստմոդեռնիզմ հասկացությունը և դրա զարգացման նախադրյալներն ու օրինաչափությունները:

2. Քննությունը կատարել ըստ սեռային տարբերակման՝ ընդգծելու համար յուրաքանչյուր բնագավառում պոստմոդեռնի դրսևորման առանձնահատկությունները:

3. Կատարել բնագրային հանգամանալից վերլուծություն՝ տեսանելի դարձնելու համար տեսական դրույթների կիրառումը:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության բերած կարևոր նորությունն այն է, որ առաջին անգամ 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի հայ գրականությունը քննվել է միանգամայն նոր դիտանկյունից՝ շեշտը դնելով պոստմոդեռնիստական գաղափարների գեղարվեստական կիրառման վրա: Մինչ օրս, ի տարբերություն արտասահմանյան և ռուսական գրականագիտության, հայ գրականագիտության մեջ պոստմոդեռնիզմի առկայությանը գրեթե չեն անդրադարձել, և ըստ արժանվույն վերլուծություն չի կատարվել. հանդիպում են միայն նվազ թվով հիշատակումներ՝ այն էլ մամուլի էջերում: Նման

անդրադարձներ թերևս կարելի է համարել Տաթև Սողոմոնյանի «Հայկական մոդեռնիզմ և հայկական պոստմոդեռնիզմ»[1], Ալվարդ Սեմիրջյան-Բեքմեզյանի «Պոստմոդեռնիզմի գեղագիտության հետքերով. Հովհաննես Թեքգյոզյանի «Փախչող քաղաքը» վիրտուալ կինովիպակը»[2] հոդվածները, որոնց մեջ մասնակի հիշատակվում, երբեմն բնութագրվում է պոստմոդեռնիզմը:

Այսինքն՝ ժամանակակից հայ գրականագիտության մեջ թեմայի ուսումնասիրության բացով պայմանավորված, կարծում ենք, որ սույն աշխատանքը կարելի է դիտարկել որպես նորություն:

Քաղաքակրթական մեր ժամանակը պոստմոդեռնիստական է, հայ գրականության մեջ առկա են պոստմոդեռնիստական գաղափարներ և արտահայտչական միջոցներ, որոնց տեսական հիմնավորումը օրախնդիր հարց է: Ատենախոսության արդիականությունն էլ պայմանավորված է այդ հարցի պարզաբանման անհրաժեշտությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրությունը կատարելիս կիրառվել են վերլուծական, տիպաբանական, երբեմն նաև համեմատական մեթոդները, որոնց միջոցով դիտարկվել են սույն ատենախոսության շրջանակներում ընտրված ստեղծագործությունների տեքստերը, ինչպես նաև մեկնաբանվել քննարկվող թեմաները: Ըստ հարկի՝ պայմանավորված վերլուծվող նյութով կամ խնդրի բնույթով, կիրառել ենք նաև պատմական մեթոդը, ժամանակագրական, կենսագրական և գրական երկերի վերլուծության համակարգային ու ամբողջական վերլուծության սկզբունքները: Ատենախոսության սահմաններում նյութը մատուցվում է բնագրերի կոնկրետ վերլուծությունների հիման վրա, հետևաբար առկա են որոշակի թվով բնագրային մեջբերումներ:

ԹԵՄԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունն իր գիտատեսական ու գործնական նշանակությամբ կարող է օգտագործվել ժամանակակից հայ գրականության դասընթացների, թեմատիկ կամընտրական դասախոսությունների և սեմինարների անցկացման համար, ինչպես նաև ժամանակակից հայ գրականության առանձնահատկություններն ուսումնասիրելիս:

[1] http://grigornarekatsi.am/2013-01-30-12-19-47/2013-01-31-07-19-51/87-tatev-soxomonyan
[2] http://www.cultural.am/hy/gradaran/tester/alvard-semirjyan-beqmezyan-postmodernizmi-geghagitutyan-hetqerov

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առանձին մասեր ներկայացվել են ՀՀ գիտական ժողովածուներում, պարբերականներում (տե՛ս հրապարակումների ցանկը սեղմագրի վերջում) և գիտաժողովներում: Ամբողջությամբ աշխատանքը քննարկվել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնում և դրական եզրակացությամբ հանձնարարվել է հրապարակային պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանված են ենթագլուխների, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում է աշխատանքի թեման, բնութագրվում նյութի ուսումնասիրվածության աստիճանը, նրա գիտական նորույթը, հետազոտության մեթոդաբանական հիմքը, պարզաբանվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ատենախոսության **առաջին գլուխը** կազմված է երեք ենթագլուխներից և նվիրված է «պոստմոդեռնիզմ» հասկացության, նրա առաջացման ու զարգացման պատմական և փիլիսոփայական նախադրյալների, մոդեռնիզմի հետ ունեցած առնչությունների և տարբերությունների, ինչպես նաև հայ իրականության մեջ քաղաքական, հասարակական և գեղագիտական հիմքերի հանգամանալից քննությանը:

ա) Պոստմոդեռնիզմի փիլիսոփայական համակարգի ձևավորումը:

Առաջին ենթագլխում դիտարկվում են պոստմոդեռնիստական գաղափարախոսության փիլիսոփայական հիմքերը: Ներկայացվում է պոստմոդեռնիզմ և պոստստրուկտուրալիզմ հասկացությունների առնչությունը, ինչպես նաև տեսաբաններ Ժակ Դերիդայի, Ժան Ֆրանսուա Լիոտարի, Միշել

Ֆուկոյի մոտեցումները պոստմոդեռնիզմ երևույթի և նրա փիլիսոփայական հիմքերի վերաբերյալ, տրվում են հասկացության սահմանումները՝ լայն և նեղ իմաստներով: Օրինակ՝ Լիոտարը սահմանում է պոստմոդեռնիզմը որպես «20-րդ դարավերջի գիտության, արվեստի և գրականության մեջ փոփոխությունների ենթարկված մշակույթ»[3], իսկ Դերիդան, իր հերթին, պոստմոդեռնիզմի էությունը տեսնում է դեկոնստրուկցիայի մեջ, որի դեպքում տեղի է ունենում տեքստի ապամոնտաժում, այսինքն՝ նրանում առկա ներքին-արտաքին, ձևիմաստև այլ հակադրությունները փոփոխվում են և ստեղծում նոր կառուցվածք:

Դիտարկելով պոստմոդեռնիզմի փիլիսոփայական կողմը՝ եզրակացվում է, որպոստմոդեռնիզմն իր մեջ ներառում է տարբեր գաղափարախոսություններ, որոնք գոյատևում են կողք կողքի և ամենևին միմյանց չեն ժխտում:

բ) Մոդեռնիզմից պոստմոդեռնիզմ:

Երկրորդ ենթագլխում փաստվում է, որ պոստմոդեռնիզմը, ճիշտ է, ժամանակային առումով հաջորդեց մոդեռնիզմին և բառացի նույնպես նշանակում է մոդեռնիզմին հաջորդող՝ «հետմոդեռնիզմ», սակայն այն նոր ուղղություն է և այս երկուսը դեռևս երկար ժամանակ գոյություն ունեցան կողք կողքի: Պարզաբանվում է մոդեռնիզմ ընդհանրական անունը կրող մշակութային իրողությունը, ապա ներկայացվում է մոդեռնիստական և պոստմոդեռնիստական աշխարհայացքների նմանությունն ու տարբերությունը: Նշյալ թեմայի շուրջ տեսական աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պոստմոդեռնիստական գաղափարախոսությունը սերտ հարաբերակցության մեջ է մոդեռնիստական աշխարհընկալման հետ, քանի որ պոստմոդեռնիզմը որդեգրեց և որոշակիորեն ձևափոխեց մոդեռնիստական ինչ-ինչ հատկանիշներ՝ դրանք առավել արտահայտված և ամբողջական դարձնելով: Պոստմոդեռնիստական գրականությունը բնութագրվում է նախորդող ուղղության՝ մոդեռնիզմի հետ համեմատության մեջ, որի դրույթների վրա հենվելով և միևնույն ժամանակ քննադատելով դրանք՝ ի հայտ է գալիս նոր հայացք աշխարհի վերաբերյալ, գիտակցության նոր ձև և կամ այլ կերպ ասած գեղարվեստական և գեղագիտական նոր համակարգ: Այնուամենայնիվ, գրական պոստմոդեռնիզմի սահմանների և նշանակության վերաբերյալ հստակ կարծիք դեռևս չկա, և որոշ տեսաբաններ էլ գտնում են, որ պոստմոդեռնիզմը գրականության մեջ տարածում ունեցավ մոդեռնիզմին զուգահեռ: Ավելի հստակ կարելի է մատնանշել պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ պոետիկական միջոցները, որոնք մասամբ գալիս են մոդեռնիզմից՝ սև հումորը, խաղային բնույթը, միջտեքստայնությունը, տարածաժամանակային

[3]Лиотар Ж. Ф.,Состояние постмодерна, СПБ., 1998, с. 9.

խեղաթյուրումը, տեքստի քայքայումը և հիպերտեքստի առաջացումը, հեղինակի մահվան գաղափարը, ռացիոնալի և իռացիոնալի միահյուսումը և այլն:

գ) Պոստմոդեռնիզմի գրականության հասարակական և գեղագիտական նախադրյալները հայ իրականության մեջ:

Այս ենթագլխում անդրադարձ է արվում մի շարք իրողությունների, որոնք ինչ-ինչ չափով նպաստեցին հայ գրականության մեջ պոստմոդեռնիստական հատկանիշների տարածմանը: 20-րդ դարավերջին երբեմնի հզոր ԽՍՀՄ-ի փլուզումը, նախկին խորհրդային պետությունների անկախացումը հանգեցրին մի շարք ազգամիջյան պատերազմների, որոնց թվում էր նաև հայ-ադրբեջանական բախումը: Անկախ Հայաստանը հայտնվեց բացարձակապես նոր հիմնախնդիրների լուծման առջև, որոնց գումարվում էին նաև երկրաշարժի հետևանքները, շարունակվող պատերազմը, արցախյան հակամարտության չլուծվող հիմնահարցը: Այս ամենի հետևանքով հայ ժողովրդի մոտ սկսեցին ի հայտ գալ սթրեսային ապրումներ, հոգեկան անկայունություն, բազմապիսի վախեր, ինչը քայքայող և քաոսային ազդեցությունն էր ունենում նաև արվեստի ճյուղերի և հատկապես գրականության վրա: Արցախյան հերոսամարտը մեծ արձագանք ունեցավ հայ ժամանակակից գրականության մեջ և այդ թեմայով բազմաթիվ ստեղծագործություններ գրվեցին՝ Լևոն Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ», Հովիկ Վարդումյանի «Կանթեղ», Արմեն Շեկոյանի «Հայկական ժամանակ», Սուսաննա Հարությունյանի «Քարտեզ առանց ցամաքի և ջրերի», Արտեմ Հարությունյանի «Նամակ Նոյին», Հովհաննես Երանյանի «Զինադադար» և այլ բազում երկեր: Նշված (ոչ միայն) երկերը բերեցին կյանքի նոր ընկալում, նոր աշխարհայացք ու որակական նոր հատկանիշներ, որոնք դրսևորվեցին պոստմոդեռնի պոետիկական միջոցներով:

Անցկացրած ուսումնասիրությունների արդյունքում եզրակացվում է, որ անցյալ դարի 90-ականթվականներին ասպարեզ եկած գրականասերունդը իրգեղագիտական ճաշակով ու հեղափոխական տրամադրվածությամբ նախորդից լիովին տարբեր գրական շրջափուլ ձևավորեց՝ իր հետ բերելով կյանքի լիովին նոր ընկալում, և ժամանակակից գրականությունը տարբերվեց նախորդ՝ խորհրդային շրջանի գրականությունից նոր և ավելի համարձակ դրսևորմամբ: Ավագ սերունդը ևս անմասն չմնաց գրականության մեջ կատարվող փոփոխություններից, և ավագներից շատերը նույնպես որդեգրեցին նոր, ինչու ոչ, պոստմոդեռնիստական սկզբունքներ՝ փորձելով հաղթահարել անցման շրջանի բարդությունները:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

«ՈՒՇԱՑԱԾ» ՄՈԴԵՌՆԻԶՄԻ ՊՈԵԶԻԱՆ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլուխը ևս ներառում է երեք ենթագլուխ՝ համակարգված ըստ պոստմոդեռնիստական հատկանիշների կիրառության: Մոդեռնիզմի սկզբունքները, համաշխարհային գրականության համեմատությամբ, հայ գրականությունն մուտք գործեցին արդեն ավելի ուշ՝ պոստմոդեռնիզմի ժամանակներում, և կարելի է ասել՝ դրան զուգահեռ, որն էլ հենց նրանց տարանջատման որոշ շփոթի տեղիք է տալիս:

ա) Իրականի և անիրականի միաձուլումը իբրև աշխարհի քաոսայնության դրսևորում:

Այս ենթագլխում ներկայացվում են ժամանակակից հայ պոեզիայում պոստմոդեռնիստական մի շարք հատկանիշների, այն է՝ իրականի և անիրականի միաձուլում, սև հումոր, աստվածաշնչյան միֆերի վերաիմաստավորում, ժամանակային խեղաթյուրում և այլ հատկանիշների դրսևորումները: Անդրադարձ է արվում Հենրիկ Էդոյանի, Հովհաննես Գրիգորյանի, Արտեմ Հարությունյանի, Էդվարդ Միլիտոնյանի, Հուսիկ Արայի, Արմեն Շեկոյանի, Սոնա Վանի և այլոց ստեղծագործություններին և բնագրային օրինակների միջոցով ներկայացվում է այս կամ այն հատկանիշի կիրառումը: Առավել հետաքրքրական է այն փաստը, որ բանաստեղծների մեծամասնությունը նման տրամադրություններ արտահայտել են անցյալ դարի 60-ականներին, որ նշանակում է, թե մեր պոեզիայում մոդեռնիզմն ու պոստմոդեռնիզմը զուգահեռաբար գոյության իրավունք ստացան:

Իրականի և երևակայականի սահմանների խախտմանը զուգահեռ՝ ժամանակակից հայ պոեզիայում տարածում ունեցավ նաև պոստմոդեռնիստական ժամանակի շրջափուլը: Օրինակ՝ Հովհաննես Գրիգորյանը գրում է. «....ամենադժվարն առաջին հազար տարին է, // հետո ամեն ինչ դառնում է սովորական, // հետո սկսում է կրկնվել անվերջ՝ // առավոտյան, կեսօրին, երեկոյան...»[4]: Բնական է, որ ժամանակի շրջա-նաձև պտույտի գաղափարը տարբեր բանաստեղծներ արտահայտում են ոճի և պատկերավորության տարբեր միջոցներով, ոմանք իբրև զուտ փիլիսոփայություն, ոմանք՝ իբրև կյանքի պատկեր, բայց դարարդեն բանաստեղծական անհատականության խնդիր է:

բ) Միֆի իմաստային նոր կիրառությունը:

Այս ենթագլխում ներկայացվում է 1990-2010-ական թվականների հայ պոեզիայում միֆական տարրերի կիրառումը: Նոր մտածողությունը փոխեց նաև պոեզիայի պոետիկան, նրա արտահայտչաձևերը, որոնց մեջ էական տեղ է գրավում միֆը:

[4]Գրիգորյան Հ., Հրեշտակներ մանկության երկնքից, Եր., 1992, էջ 18:

Կարելի է ասել, որ մոդեռնիզմը պոեզիա բերեց միֆը և ժառանգեց այն պոստմոդեռնիզմին: Բնագրային օրինակների քննությունը ցույց է տալիս, որբանաստեղծներից շատերի ստեղծագործություններում խաչաձևվում են հայ պոեզիայի ավանդները «դրսի» ժամանակակից ըմբռնումների հետ, և այդ համատեքստում կարևոր տեղ է զբաղեցնում միֆը, որը ծառայում է տարբեր նպատակների. ընդգծում է հերոսի օտարումը իրականությունից, արտահայտում է որոշակի օրինաչափությունների պարբերականությունը, վերաբերմունքը աշխարհի նկատմամբ և այլն:

Ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ ձգտելով, այդպես ասած, «միֆաստեղծել իրականությունը»՝ ժամանակակից հայ բանաստեղծները հաճախ իրենց ստեղծագործություններում գործածում են աստվածաշնչյան (առավելապես ջրհեղեղի, Նոյի միֆերը) և դիցաբանական մի շարք միֆեր: Քրիստոնեական միֆերն իմաստային նոր կիրառմամբ հիմնականում ունեն այլաբանական դրսևորում և պոստմոդեռնիստական գրականության մեջ հաճախ հանդես են գալիս իբրև խորհրդանիշներ, իսկ դիցաբանությանն անդրադառնալիս ակնհայտ է Փոքր Միհերի կերպարին դիմելու օրինաչափությունը, որը ոչ միայն վախճանաբանական տրամադրությունների արտահայտություն է, այլև հասարակական նոր հարաբերություններով պայմանավորված՝ կյանքի նորոգության պահանջ և հավատ (Ա. Հարությունյանի «Նամակ Նոյին», Հուսիկ Արայի «Ազատության հրապարակ», Վարդան Հակոբյանի «Մենարան» ժողովածուների բանաստեղծություններում և այլն):

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հայ ժամանակակից պոեզիայում միֆակիրառությունը բավականին մեծ տարածում ունեցավ, և սակայն հանդես եկավ իմաստային նոր՝ առավելապես պոստմոդեռնիստական կիրառությամբ կամ, այլ կերպ ասած՝ այլաբանության և հակամիֆի տեսքով:

գ) Ինտերտեքստայնության պոստմոդեռնիստական առանձնահատկությունները:

Երրորդ ենթագլխում դիտարկվում է միջտեքստայնությունը երևույթը (ինտերտեքստ) և նրա կիրառումը ժամանակակից հայ պոեզիայում: Ինտերտեքստը բնորոշվում է որպես պոստմոդեռնիստական արվեստի ստեղծագործության կառուցման հիմնական եղանակ, որի ընթացքում օրինակ՝ գրականության պարագայում տեքստը կառուցվում է այլ տեքստերի բացահայտ կամ անհասցե օգտագործման միջոցով: Իգոր Սմիռնովը գրում է. «Միջտեքստայնությունն ընդհանրական հասկացություն է, որը մատնանշում է, որ գեղարվեստական ստեղծագործության գաղափարը ամբողջությամբ կամ մասնակիորեն ձևավորվում է այլ տեքստի հղման միջոցով, որը կամ նույն այդ հեղինակի այլ

ստեղծագործությունից է կամ պատկանում է արվեստի հարակից ճյուղին և կամ էլ նախորդող գրականությունից է»[5]:

Դիտարկելով հայ գրականության մեջ ինտերտեքստի կիրառումը, հարկ է նշել, որ հանդիպում են մեջբերված տեքստեր և՛ համաշխարհային գրականությունից, և՛ հայ դասական գրականության ներկայացուցիչների ստեղծագործություններից: Օրինակ՝ բանաստեղծները, փորձելով օգտագործել դասական հեղինակների խոսքերը, հաստատում էին, որ հին ճշմարտություններն ու կարգախոսները չեն կորցրել իրենց նշանակությունը, նրանք շարունակում են մնալ արդիական: Արմեն Շեկոյանը գրում է. «Դուք կառչած եք իրարու, բայց հեռու չեք իրարից: // Դուք մոտիկ եք իրարու, զի կառչած եք իրարից: // Մի՛ նեղսրտեք, դիմացեք՝ կառչած այդպես անդադար: // Գործն է անմահ, իմացե՛ք, որ խոսվում է դարեդար»[6]:

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ

ԱՐՁԱԿԸ ՏԵՔՍՏԻ ՔԱՅՔԱՅՄԱՆ, ՀԵԳՆԱՆՔԻ ՈՒ ՀԱՄԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ատենախոսության երրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից և նվիրված է արձակ գրականության մեջ պոստմոդեռնիստական հատկանիշների դրսևորմանը: Մինչ առանձին գրողների գրական ժառանգության ուսումնասիրությանն անցնելը փորձ է արվել ընդհանուր գծերով ներկայացնել հայ ժամանակակից արձակի ոլորտը և այնտեղ առկա այն նորը, որ այս կամ այն չափով առնչվում է պոստմոդեռնիզմի հետ: Նպատակահարմար համարվեց ատենախոսության սույն գլուխը շարադրել դիմանկարների տեսքով, քանի որ բովանդակային առումով արձակի հնարավորություններն ավելի մեծ են, ժանրերը՝ տարողունակ և ըստ հատկանիշների (ինչպես պոեզիայի բաժնում) շարադրելու դեպքում անխուսափելիորեն կառաջանար մեխանիկական կրկնություն: Առաջադիր նպատակին հասնելու և երևույթը տեսանելի դարձնելու համար քննության են ենթարկվել տարբեր գրական սերունդների առավել ցայտուն ներկայացուցիչների երկերը (Ն. Ադալյան, Լ. Խեչոյան, Գ. Խանջյան, Հ. Սարիբեկյան): Փորձ է արվել նաև դիմանկարների վերնագրերում շեշտադրել քննարկվող առանցքային խնդիրը:

ա) Ապրկալիպսիս Նորայր Ադալյանի մեծ քաղաքում (Տեքստից դեպի հիպերտեքստայնություն):

Առաջին ենթագլուխը նվիրված է ավագ սերնդի ներկայացուցիչ Նորայր Ադալյանի ստեղծագործության ուսումնասիրությանը: Ադալյանական արձակը մինչ-

[5] Смирнов И., Порождение интертекста, СПБ, 1995, с. 193.
[6] Շեկոյան Ա., Անտիպոեզիա, Եր., 2000, էջ 78:

անկախացման փուլում արդեն աչքի էր ընկնում այսպես կոչված եվրոպական մոդեռնի ձգտմամբ, սակայն հետանկախացման շրջանը արդեն նախորդից լիովին տարբեր և մի նոր փուլ ձևավորեց Ադալյանի գրական աշխարհում, որը լայն առումով կարելի է բնորոշել որպես անցում տեքստից դեպի հիպերտեքստ:

Բնագրային օրինակների հիման վրա ներկայացվում են Ադալյանի մի շարք ստեղծագործությունների, ինչպիսիք են՝ «Համաճարակ», «Ապոկալիպսիս», «Սև քառակուսի կարմիր անապատում», «Ծաղրածուն մեծ քաղաքում» և բազում այլ պատմվածքների վերլուծություններ: Դիտարկելով պոստմոդեռնիստական գաղափարախոսության դրսևորումը ադալյանական արձակում՝ եկել ենք այն եզրակացության, որ գրողի ստեղծագործություններին ամենից բնորոշ է կյանքի և մահվան միջև առկա սահմանների վերացումը և աբսուրդային մի շարք այլ իրավիճակների ստեղծումը («Թաղման թափոր», «Ազնիվ մարդը կավե սափորում»), միֆական տարրերի կիրառումը («Սև քառակուսի կարմիր անապատում»), քաղաքական բնույթի սև հումորը («Ծաղրածուն մեծ քաղաքում») և այլն:

բ) Պոստմոդեռնիստական կոդավորում Լևոն Խեչոյանի արձակում: Երկրորդ ենթագլխում անդրադարձել ենք այդպես ասած «միջին սերնդի» ներկայացուցիչ Լևոն Խեչոյանի գրական գործունեությանը: Խեչոյանը գրական ասպարեզ իջավ արդեն հետանկախացման ժամանակաշրջանում, երբ Հայաստանը կանգնած էր մի շարք գերխնդիրների առջև, և նոր շրջանի գրողի համար ակնառու էր դառնում իդեալի և իրականության անհամապատասխանությունը: Խեչոյանի արձակում արտաքին աշխարհի իրադարձությունները ուղղակի արձագանք չէ, որ գտնում են, այլ անցնելով պոստ-մոդեռնիստական ընկալումների կամ, այլ կերպ ասած, պոստմոդեռնիստական կոդավորման միջով՝ ընթերցողին են հասնում պոետիկական նոր միջոցներով:

Անցկացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ պոստմոդեռնիզմի մասնակի դրսևորումներ առկա են գրողի գրեթե բոլոր ստեղծագործություններում: Օրինակ՝ «Սև գիրք ծանր բզեզ» և կամ «Միերի դրան գիրքը» երկերում ակնառու է պոստմոդեռնիստական ժամանակային շրջափուլի, ինչպես նաև ժանրային միավորման առկայությունը և կամ «Խնկի ծառեր» ստեղծագործությունը աչքի է ընկնում իրականի և երևակա-յականի սահմանների խախտմամբ և միֆական տարրերի լայն կիրառմամբ:

գ) Գուրգեն Խանջյանի հերոսի անավարտ պատյանը՝ շարժաանդուղքից մինչև գնացք:

Խանջյանի արձակի բանարվեստը ևս, ինչպես ատենախոսության նախորդ գլուխներում նշված գրողներից շատերինը, ինքնանպատակ չէ, պայմանավորված է ասելիքի

բովանդակությամբ: Խանջյանի ստեղծագործություններին բնորոշ է ժամանակային լճացման և անելանելի լաբիրինթոսի ձևավորման միտումը, օրինակ՝ «Շարժասանդուղք», «Լուր չկա» ստեղծագործություններում, նույնկերպ «Նստիր Ա գնացքը» և «Ենոքի աչքը» վեպերում: Ժամանակային և տարածական շրջափակման միջոցով գրողը մի ուրույն պատնեշ է ստեղծում ոչ միայն իր հերոսների և արտաքին աշխարհի, այլև հերոսի գիտակցականի և անգիտակցականի միջև՝ ձգտելով զերծ մնալ և՛ ժամանակի դառն իրականությունից, և՛ այդ դառնության գիտակցումից: Ուշագրավ է նաև, որ Խանջյանի ստեղ-ծագործությունների շատու շատ հերոսներ զուրկ են անհատա-կանությունից, և այս երևույթը աստիճանաբար հասնում է ծայրահեղության՝ անանուն հերոսների առկայությունից մինչ ֆիզիկական փոխակերպում:

Խանջյանի կերտած հերոսները Կաֆկայի հերոսների նմանությամբ միայնակ են, անանուն, խեղճ ու փոքրմարդիկ, որոնք հանդես են բերվում մղձավանջային ինիրավիճակներում, ևնրանց համար փրկություն ասվածը գոյություն չունի:

Գուրգեն Խանջյաննիր ստեղծագործություններում կերտում է առանց հեռանկարի, միայնակ, այդպես ասած «միջինացված մարդու» կերպար, ով լայն առումով ծառայում է ժամանակակից մարդու և հասարակության օտարվածության խնդրի պարզաբանմանը, և Խանջյանի արձակում անհատի և հասարակության միջև եղած անդունդը ամենից ընդգրկուն դրսևորումն է ստանում, քանի որ, ինչպես նշվեց, հանգեցնում է ոչ միայն հոգեբանական, այլև ֆիզիկական ամբողջական կերպարանափոխության:

դ) Միստիկան և իռացիոնալը Հրաչյա Սարիբեկյանի երկվորյակ հայելիներում:

Հրաչյա Սարիբեկյանը մուտք գործեց գրական ասպարեզ արդեն 21-րդ դարի սկզբին: Սարիբեկյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում սուր հարցադրումներով, ուր ամենից հաճախ հանդիպում է ռացիոնալի և իռացիոնալի, կյանքի և մահվան, գիտակցականի և ենթագիտակցականի հակադրությունը: Առաջադրելով իր հարցերն ու դրանց յուրօրինակ պատասխանները՝ գրողին հաջողվում է ստեղծել խորհրդանիշներով հարուստ անիրականի և իրականի համադրություն, որտեղ հերոսները վերցված են ժամանակակից կյանքից, ուստի հերոս կարող է լինել մեզանից յուրաքանչյուրը:

Դիտարկելով «Գուշակություններ հայելիներում», «Երկվորյակների արևը», «Ապուշների ուղևորությունը» վեպերը և մի շարք այլ պատմվածքներ, եկել ենք այն եզրակացության, որ արդի հայ գրականության մեջ Հրաչյա Սարիբեկյանի արձակին ամենից շատն է բնորոշ պոստմոդեռնիստական հատկանիշների կիրառությունը: Սարիբեկյանին հաջողվում է ստեղծել միստիկ, իռացիոնալ,

այլ ընտրանքային իրականություն, որը հերոսներից զատ ներքաշում է նաև ընթերցողին ու դրդում փակել աչքերն ու հավատալ անհայտությանը. հավատալ ու հիշել, որ չնայած՝ «բոլորը մտածում են, որ կգա ժամանակը... ժամանակը միայն գնում է»:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ

Ժամանակակից դրամաների հեղինակները ևս ոչ միայն հետանկախացման շրջանում նոր ձևավորվող սերնդի ներկայացուցիչներ են, այլև խորհրդային տարիներին արդեն ստեղծագործած գրողներ, ընդ որում՝ նաև անվանի բանաստեղծներ և արձակագիրներ, ինչն էլ ավելի նպաստեց դրամատիկ ժանրերի զարգացմանը:

ա) Աբսուրդային կյանք պոստմոդեռնիստական թատրոնի սահմաններում:

Առաջին ենթագլխում ներկայացված են ժամանակակից հայ դրամատուրգների (Պերճ Զեյթունցյան, Նորայր Ադալյան, Գուրգեն Խանջյան, Կարինե Խոդիկյան, Սամվել Խալաթյան և այլք) ստեղծագործությունների ուսումնասիրությունները պոստմոդեռնիստական և աբսուրդի գրականության տեսանկյունից: Կարելի է ասել, որ ժամանակակից ստեղծագործություններում վերանում է սահմանը արտաքին աշխարհի և պիեսի միջև, և տեղի է ունենում կյանքի և թատրոնի միաձուլում: Սրան զուգահեռ առաջ է գալիս նաև «պիես պիեսի մեջ» պոստմոդեռնիստական կառույցը, որի դեպքում ստեղծագործության սյուժեում պատմվում է պիեսի տարածքում ձևավորվող մեկ այլ պիեսի բեմադրության մասին, օրինակ՝ Նորայր Ադալյանի «Կինը և տղամարդը», Կարինե Խոդիկյանի «Այստեղից հետո», Ռաֆայել Նահապետյանի «Փոս» պիեսներում և այլն:

Դիտարկելով ժամանակակից դրամատուրգիայի ընդհանուր պատկերը՝ կարելի է եզրակացնել, որ եթե խորհրդային տարիներին դեռևս պահպանվում էին դասական դրամայի կառուցվածքային ձևերը, ապա հետանկախացման ժամանակաշրջանում աբսուրդի դրամաև լիարժեք կիրառություն է ստանում բազմաթիվ դրամատուրգների արվեստում:

բ) Վերջին լաբիրինթոսը՝ աբսուրդի վարագույրից այն կողմ: Այս ենթագլխում ժամանակակից հայ դրամատուրգիայի ուսումնասիրության ընթացքում շեշտը հիմնականում դրվում է պոստմոդեռնիստական ժամանակի կիրառման վրա: Ի տարբերություն դասական դրամաների, պոստմոդեռնիստական պիեսներում այս կամ այն ձևով ընդգծվում են ժամանակային լաբիրինթոսում անդադար պտտվելու, ժամանակի խախտվածության և կամ առհասարակ անժամանակության զգացողությունները, լինի դա մեկ-երկու բառի ակնարկով, թե

բացահայտ շեշտադրմամբ, օրինակ՝ Նորայր Ադալյանի «Լոմբարդ», Պերճ Զեյթունցյանի «Մահապատիժ հայկական ձևով կամ 2005թ. հունվարի 36», Գուրգեն Խանջյանի «Բոլերո», Կարինե Խոդիկյանի «Խաղի ժամանակը», Սամվել Կոսյանի «Կարմիր լույսի տակով» և այլ ստեղծագործություններում:

Ի վերջո եկել ենք այն եզրակացության, որ հայ ժամանակակից դրամատուրգիան ևս զերծ չմնաց պոստմոդեռնիստական ազդեցությունից, և դա պայմանավորված է ոչ միայն «մոդային տրված տուրքով», այլև մեր կյանքի թելադրիչ հանգամանքներով: Չէ՞ որ հայելուց բացի, արտացոլումդ կարող ես տեսնել նաև թատրոնի բեմին, և առհասարակ, մեր կյանքը ևս թատերախաղ է հիշեցնում. երբեմն հոգեբանական սուր ընդգծումներով մոնոդրամա և երբեմն էլ՝ բազում տեսարաններով և բազում գործող անձանցով հակադրամա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Պոստմոդեռնիզմը 1990-2010-ական թվականների հայ գրականության մեջ» թեմայով ատենախոսությունը շարադրելիս հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Թեև պոստմոդեռնիզմի առանձին երևույթներ և նույնիսկ անվանումը երևան են եկել ավելի վաղ, բայց այն, իբրև ոչ դասական փիլիսոփայական ու գաղափարագեղարվեստական աշխարհընկալում, ձևավորվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և այն ճանաչում ստացավ 20-րդ դարի երկրորդ կեսին: Ինչպես հետխորհրդային երկրներում, Հայաստանում ևս պոստմոդեռնիզմի հատկանիշները երևան եկան իբրև բոլոր տեսակի՝ փիլիսոփայական, սոցիալ-պատմական, գիտական ու գեղարվեստական ուտոպիաների գեղագիտական ռեակցիա: Այսուհանդերձ, գոյություն չունի պոստմոդեռնիզմի միասնական ու ամբողջական ըմբռնում, որ բավարարի թե՛ տեսաբաններին, թե՛ գրողներին:

2. Որոշակի հատկանիշներ փոխառնելով մոդեռնիզմից, ձևափոխելով ու ավելի սրելով ինչ-ինչ հատկանիշներ՝ պոստմոդեռնիզմը վերաիմաստավորեց գրականության դերը հասարակական կյանքում, գրականությունը դիտարկեց ոչ իբրև կյանքի արտացոլում, որը նշանակում է հրաժարում ռեալիզմից, այլ իբրև մտացածին իրականության ստեղծում:

3. Հայ իրականության մեջ պոստմոդեռնիզմի նկատմամբ առավել զգայուն եղավ պոեզիան, որի ներկայացուցիչները՝ 1960-ականների երիտասարդ սերնդի բանաստեղծները՝ Հ. Գրիգորյան, Հ. Էդոյան, Ա. Հարությունյան և այլք, ուժեղ հակազդեցության պայմաններում ձևավորեցին բանաստեղծական նոր մտածողություն, պոեզիա բերեցին

միֆականության, փոխաբերության և այլ հատկանիշներ, որոնք բնորոշ էին մոդեռնիզմին: Նրանց ստեղծագործություն-ներում դեռևս հստակ չէին մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի սահմանները, որովհետև պոստմոդեռնիզմը նոր էր վերելք ապրում:

4. Ավագ սերնդի բանաստեղծների՝ Հ. Սահյան, Վ. Դավթյան և այլք, դեռևս առաջնագծում լինելու պարագան որոշակի տեղատվություն առաջացրեց նորերի մոտ, որոնց շուրջը 80-ական թվականներին թեժացած բանավեճը ավելի տեսանելի դարձրեց վերջիններիս գեղագիտությունը, նրանց պոետիկան և նոր հերոսին, որը կանգնած էր իրականի ու անիրականի խաչմերուկին, ով կյանքը ընկալում էր որպես հեգնական խաղ և ով բնակվում էր ոչ թե մեկ, այլ մի քանի տեքստերի համաձուլվածքում:

5. Ի տարբերություն բանաստեղծների՝ 60-ականների արձակագիրների նոր սերունդը (Հր. Մաթևոսյան, Վ. Պետրոսյան, Պ. Զեյթունցյան, Ն. Ադալյան և այլք), թեև մտածողության ու պատկերավորման թարմ միջոցներով, բայց դեռ դավանում էր ռեալիզմը և պատկերում իրական աշխարհը:

6. 1980-ականների վերջից և արդեն 90-ականների արձակում սկսեցին իշխել պոստմոդեռնիզմի պոետիկական միջոցները՝ այլաբանությունը, ինտերտեքստը, միֆականությունը և այլն: Դա հատուկ էր ոչ միայն արձա-կագիրների նոր սերնդին՝ Լ. Խեչոյան, Գ. Խանջյան և այլք, այլև ավագ սերնդի՝ Ա. Այվազյանի, Պ. Զեյթունցյանի, Ն. Ադալյանի արձակին:

7. Տարբեր սերունդների, այսպես ասած, ներկայացուցիչ-արձակագիրների՝ Ն. Ադալյանի, Լ. Խեչոյանի, Գ. Խանջյանի, Հ. Սարիբեկյանի դիմանկար-էսքիզներում առավել նկատելի են նշված գրողների գեղագիտության մեջ աստիճանական անցումը պոստմոդեռնիզմի պոետիկային:

8. Ն. Ադալյանի նոր ժամանակի ստեղծագործություններում դրսևորում ունեցան բանարվեստի նոր միջոցներ, ինչպիսիք են՝ աբսուրդայ-նությունը, այլաբանությունը, քաղաքական սև հումորը և այլն, որոնք, իրենց հերթին, պատճառ հանդիսացան ստեղծագործական նոր բնագծերի նվաճման: Խեչոյանական արձակին ամենից բնորոշն է պոստմոդեռնիստական շրջափուլի, ժամանակային լաբիրինթոսի, ինչպես նաև բառային և պատկերային պարբերական կրկնությունների հեղինակային հնարը: Խանջյանի ստեղծագործական ժառանգությունը բնութագրվում է ժամանակակից իրականության, անհատի և հասարակության ներքին կապերի ու օրինաչափությունների բացահայտմամբ, և ըստ այդմ՝ նրա երկերում հիմնականում արծարծվում են մարդու միայնության ու էքզիստենցիալիստական օտարվածության «հավերժական» թեմաները: Սարիբեկյանի ստեղծագործությունները պետք է

բնորոշել, որպես խորհրդանշաններով հարուստ իրականի և երևակայականի, ռացիոնալի և իռացիոնալի այլընտրանքային համադրություն, ուր ջնջված են նաև այս և այն աշխարհների միջև սահմանները:

9. Թերևս դրամատուրգիայի ասպարեզում առավել նկատելի են պոստմոդեռնիստական մոտեցումները: Հատկանշական է աբսուրդի թատրոնի փորձարարությունը առավել երիտասարդ դրամատուրգների մոտ և նույնի որոշակի տուրքը ավագների ու միջին սերնդի՝ Ն. Ադալյանի, Գ. Խանջյանի, Կ. Խոդիկյանի դրամաներում: Դրամատուրգիայի մեջ առավելապես շեշտվում է խաղի հանգամանքը (կյանքը թատրոն է, թատրոնը խաղ է), ընդհանրացված անանուն հերոսների տիրապետությունը, անհեթեթ իրավիճակների առկայությունը: Նոր պոետիկական միջոցներով դրամատուրգիան բերում է աշխարհընկալման նոր փիլիսոփայություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. **Իրականի և երևակայականի անժամանակյա խաչմերուկներում**, «Բանբեր Երևանի համալսարանի. Հասարակական գիտություններ. Բանասիրություն», ԵՊՀ հրատ., Երևան, 2016, թիվ 3 (21), էջ 14-25:
2. **Պոստմոդեռնիզմի մասնակի դրսևորումները Լևոն Խեչոյանի պատմվածքներում**, «Կանթեղ», Ասողիկ հրատ., Երևան, 2016, թիվ 1 (66), էջ 3-11:
3. **Պոստմոդեռնիստական հերոսը Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծություններում**, «Հայագիտական հանդես», Երևան, 2016, թիվ 2 (32), էջ 140-152:
4. **Միֆակիրառությունը որպես ժամանակակից հայ պոեզիայում պոստմոդեռնիզմի դրսևորում**, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի. Լեզվաբանություն և բանասիրություն», Լինգվա հրատ., Երևան, 2016, թիվ 1 (38), էջ 500-515:
5. **Պոստմոդեռնիզմի տեսական և փիլիսոփայական հիմքերը**, «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու. Հասարակական գիտություններ», ԵՊՀ հրատ., Երևան, 2016, թիվ 1.3 (13), էջ 22-26:
6. **Գուրգեն Խանջյանի անավարտ պտույտը՝ շարժասանդուղքից մինչև գնացք**, «Հայագիտական հանդես», Երևան, 2017, թիվ 2 (36), էջ 155-165:
7. **Համաճարակ Նորայր Ադալյանի մեծ քաղաքում**, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի. Լեզվաբանություն և բանասիրություն», Լինգվահրատ., Երևան, 2017, թիվ 1 (40), էջ 491-503

Диана Эдуардовна Мнацаканян

ПОСТМОДЕРНИЗМ В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ
1990-2010 годов

РЕЗЮМЕ

Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук
по специальности 10.01.02 – Современная армянская литература,
литературовединие

Защита состоится 20.12.2017 г. в 14:30 часов на заседании специализированного Совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу: Ереван, улица Хачатура Абовяна 52/а, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202

В диссертационной работе рассмотрено понятие «постмодернизм» и его влияние на современную армянскую литературу. Представлены прозаические, поэтические и драматические произведения современных армянских писателей.

Научная новизна диссертации заключается в том, что это одно из первых системных исследований проявления постмодернизма в армянском литературоведении. В иностранной и русской литературе нередко встречаются ценные исследования постмодернизма, но в армянской литературе по сей день тема постмодернизма почти не изучалась и встречаются лишь несколько упоминаний, и то на страницах прессы.

Объект исследования диссертации – Проявление постмодернизма в армянской литературе 1990-2010-ых гг.

Диссертация состоит из введения, четырех глав с соответствующими подглавами и подразделами, заключения и списка литературы.

Во введении обоснована актуальность темы исследования, степень научной разработанности темы, научная новизна работы, объект, предмет и цель исследования, методы диссертационного исследования, рамки и задачи исследования.

Первая глава диссертационной работы («Исторические и теоретеческие основы постмодернизма») посвящена возникновению и развитию постмодернизма, сходству и различию между модернизмом и постмодернизмом, а также общественных, политических и эстетических основ постмодернизма в армянской реальности.

Во второй главе («Опоздавшая» поэзия модернизма в период постмодернизма») рассматриваются проявления постмодернизма и его соотношение с модернизмом в современной армянской литературе. В этой главе произведения современных армянских поэтов классифицируются согласно постмодернистическим чертам.

В третьей главе («Проза в сопоставленном контексте иронии и распада текста») представляются художественные проявления постмодернистического мировозрения писателей. Рассматривая общее состояние армянской прозы, мы выделили те литературные произведения, в которых чаще всего встречаются постмодернистические черты. Были избраны как писатели советских времен, так и представители молодого поколения (Норайр Адалян, Левон Хечоян, Гурген Ханджян, Грачья Сарибекян).

В четвертой главе («Постмодернистическая драма») рассматривается проявление постмодернистического мировоззрения в современной армянской драматургии.

В заключении представлен ряд выводов, обобщающих проведенное исследование.

Diana Mnatsakanyan

POSTMODERNISM IN ARMENIAN LITERATURE
1990-2010-s

Summary

The Thesis for the degree of Candidate of Philology
Discipline 10.01.02 – “Modern Armenian literature:theory of literature”

The defense will take place on 20.12.2017, at 14:30 at the session of specialized council of High Attestation Commission 012, operating in Yerevan State University. Address: Yerevan, KhachaturAbovyan 52/a ,YSU, the Department of Philosophy, auditory 202.

In the dissertation we observe the concept of postmodernism and its influence on modern Arminian literature. Here prose, poetic and dramatic works by contemporary Armenian writersare presented.

The scientific innovation of dissertation asserts that this is one of the first systematized studies of the manifestation of postmodernism in Armenian literature. In foreign and Russian literature valuable research on postmodernism is much, while in Armenian literature to this day the theme of postmodernism has hardly been studied, and there are only a few references to it carried out on the pages of the press.

The subject of the study is the manifestation of postmodernism in the 1990-2010-ies Armenian literature.

The dissertation consists of an introduction, four chapters, which consist of subchapters, conclusions and references.

The introduction focuses on the relevance of the topic of study, the level of the scientific elaboration of the topic, the scientific novelty of the work, the subject, the scope and the objectives of the study, the methods of the study carried out in dissertation,the frameworks and the tasks of the study.

The first chapter of the thesis ("Historical and theoretical foundations of postmodernism") is devoted to the emergence and development of postmodernism, similarities and differences between modernism and postmodernism, as well as to the public, political and aesthetic foundations of postmodernism in the Armenian reality.

The second chapter ("Late" poetry of modernism in the period of postmodernism") examines the manifestations of postmodernism and its relation to modernism in modern Armenian literature. In this chapter the work by contemporary Armenian poets is represented through classification implemented according to postmodern features.

In the third chapter ("Prose in the juxtaposed context of irony and the collapse of the text") artistic manifestations of the postmodern worldview of writers appear. Considering the general state of Armenian prose, we singled out literary works of those writers in which postmodern features are most common. Here Soviet-era writers and representatives of the younger generation (Norayr Adalyan, Levon Khechoyan, Gurgen Khanjyan, Hrachya Saribekyan) are selected.

In the fourth and last chapter ("Postmodern drama") the manifestation of the postmodern worldview in contemporary Armenian drama is considered.

In the conclusion we have introduced a number of deductions, which comprise the basis of the conducted study.